ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **19.01.2024թ.**

Հիմք ընդունելով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետև՝ Խորհուրդ) նախագահի 2024 թվականի հունվարի 15-ի N 01-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան հաշվետվության նախագիծը քննարկելու և հավանության արժանացնելու, 2023 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատականը քննարկելու և հաստատելու և Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունը քննարկելու նպատակով 2024 թվականի հունվարի 18-ից 19-ը անցկացվել է արտահերթ նիստ՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ.

1. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան հաշվետվության նախագծին:
2. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատականը:
3. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվություն:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Ավանեսյան	- ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ)
Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա. Դանիելյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Լ. Բալյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Քվեարկությանը չի մասնակցել՝

Ս. Սահակյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի ավագ գիտաշխատող

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ա. Ավանեսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
2) Ռ. Սարգսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
3) Ա. Դանիելյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
4) Ա. Խոջոյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
5) Լ. Բալյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
6) Վ. Սիրունյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
7) Ժ. Մայիլյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
8) Տ. Քեյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
9) Շ. Դանիելյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ օրակարգի բոլոր հարցերին **9 կողմ, 0 դեմ:**

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան հաշվետվության նախագծին:

2. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատականը:

3. Ընդունել ի գիտություն ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ